Հաստատում եմ՝

Տնօրեն _____/Հ.Կոստանյան/

_____ _____2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Լոռու մարզի քաղաք Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի

II <<գ>> դասարանի

Դասվար՝ Մ.Մելիքսեթյան

2022-2023 ուսումնական տարի

ԿՐԹԱ_ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ /դասարանի ընդհանուր բնութագիրը/

Դասարանը բաղկացած է 30 աշակերտից,որոնցից 18 -ը տղաներ են, իսկ 12-ը՝ աղջիկներ:Ունենք նորեկ աշակերտներ որանք արագ ինտեգրվեցին դասարանին :Ընդհանուր առմամբ դասարանը համախմբված է ,դասարանում տիրում է փոխօգնության մթնոլորտ:Յուրաքանչյուրն ունի ազատ ,անկաշկանդ արտահայտվելու իրավունք:Դասարանում ունենք նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա, որի նկատմամբ երեխաները ցուցաբերում են հոգատար վերաբերմունք:

2.Նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները ուստարվա ընթացում :ՈՒսումնասիրել յուրաքանչյուր երեխայի անհատական հետաքրքրությունները և ստեղծել դրանց զարգացման անհրաժեշտ պայմաններ ,խրախուսել ձեռքբերումները:Երեխաների մոտ ձևավորել հանդուր ժողականություն,վստահություն,հոգատարություն,կարգապահություն,համասգործակցություն,հայրենասիրություն: Հետևել դասարան կարգ ու կանոնին,երեխաների վարքին,հաճախումներին: Հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ:

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1Հոգևոր դաստիարակություն –Աշակերտներին ծանոթացնել հոգևոր արժեքներին,հաղորդակից դարձնել մեր ժոզովրդի անցյալին,մշակութային ժառանգությանը;Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք եկեղեցու:Հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ :

3.2 Գեղագիտական դաստիարակություն *Ստեղծել հաճելի,հարմարավետ դասարանական միջավայրա;Նպաստել գեղեցիկի ճիշտ ընկալմանն ու ստեղծմանը:Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել ,թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայի կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:*

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն *Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել զրույցներ բանակի,մերօրյա հերոսների վերաբերյալ: Սերմանել քաջության ,հպարտության զգացում: Առաջացնել սեր և հարգանք հայրենիքի պատմական հերոսների նկատմամբ:Կարևորել բանակի դերն ու նշանակությունը:*

3.4 Ֆիզիկական դաստիարակություն *Երեխաներին տեղեկություն տալ ֆիզիկական կուլտուրայի առողջարարական նշանակության մասին:Նպաստել ճիշտ կեցվածքի ձևավորմանը,ճիշտ սնվելու ,առողջ սննդակարգի ,անձնական հիգիենայի պահպանմանը: Առաջնորդվել <<Առողջ մարմնում ,առողջ հոգի>>սկզբունքով:*

3.5 Աշխատանքային դաստիարակություն *Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում: Նրանց մեջ ձևավորել աշխատասիրություն,համբերատարություն,կամային հատկանիշներ:Զրուցել մասնագիտությունների կարևորության մասին:*

3.6 Բնապահպանական դաստիարակություն *Դրսևորել հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի,բույսերի,ծառերի,կենդանիների նկատմամբ: Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:*

4. Դպրոց-ընտանիք կապը *Ծնողներին իրազեկել դպրոցում և կրթության ոլորտում բարեփոխումները:Մշտապես կապ հաստատել ծնողների հետ,համագործակցել,ներգրավել դաստիարակչական աշխատանքների մեջ:*

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս. շաբաթներ	ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների բովանդա-կությունը	Կատարման ժամկետը
I	Դասարանի ակտիվի ընտրություն	5.09 - 9.09
II	Երեխաների հետ քննարկել և կազմակերպել զրույց «Իմ օրվա ռեժիմը »	12.09 -16.09
III	Անկախության օրվան ընդառաջ կազմակերպել զրույց «Իմ անկախ Հայաստանը»	19.09 -23.09
IV	Երեխաների մեջ ընկերասիրություն, միասնականություն, հանդուրժողականություն արթնացնելու նպատակով՝ կազմակերպել զրույց «Ուժը միասնականության մեջ է»	26.09 30.09
V	Պատմություն՝ «Ով է մեղավորը»	3.10. -7.10
VI	«Իմ իրավունքներն ու պարտականությունները	10.10 -14.10
VII	«Ոսկե աշուն » - դասասենյակին տալ աշնանային տրամադրություն	17.10 -21.10
VIII	Էքսկուրսիա - «Աշունը իմ աչքերով»	31.10 -4.11
IX	«Վնասակար սովորություններ»	7.11 -11.11

X	«Գրքերի կախարդական աշխարհում» - ճանաչողական էքսկուրսիա մարզային գրադարան	14.11 -18.11
XI	«Իմ սիրելի հեքիաթները»	21.11-25.11
XII	Խաղ- վարժանք «լինենք հոգատար»	28.11 -2.12
XIII	Ինչպես են տոնում Ծննդյան տոներն աշխարհում	5.12 -9.12
XIV	« Նամակ Ձմեռ պապիկին»	12.12 -16.12
XV	Ամանորյա ուրախ տոնակատարություն	19.12 -23.12
XVI	Բանակի օրվա կապակցությամբ կազմակերպել զրույց «Մեր քաջ հերոսները» - թեմայով	23.01 -27.01
XVII	Բնության նկատմամբ սեր արթնացնելու նպատակով կազմակերպել զրույց «Ինչպես օգնենք թևավոր բարեկամներին»	30.01 -3.02
XVIII	«Սնունդ և մարզանք»	6.02 -10.02
XIX	Գիրք նվիրելու կապակցությամբ կազմակերպել դաս - միջոցառում «Սիրենք մեր մայրենի լեզուն»	13.02 -17.02
XX	«Ում են կոչում բարի»	20.02 24.02
XXI	«Սովորենք անվտանգության կանոնները» - տեսահոլովակի դիտում	27.02 -3.03
XXII	Պատրաստել անակնկալ մայրիկների համար՝ «Իմ անգին մայրիկ»	6.03 -10.03

XXIII	«Ինչպիսին պետք է լինի լավ ընկերը»	13.03 -17.03
XXIV	Սուրբ Զատիկ	20.03 -24. 03
XXV	«Ինչպես եմ օգնում մայրիկիս տանը»	3.04 -7.04
XXVI	«Գարունը մտել է մեր դասարան»	10.04 -14.04
XXVII	Հիշատակի օր	17.04 -21.04
XXVIII	«Անվտանգությունը փողոցում», տեսահոլովակի դիտում	24.04 -28.04
XXIX	«Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն»	1.05 -5.05
XXX	«Լավ է երբ ... , վատ է երբ ...»	8.05 -12.05
XXXI	«Ես սիրում եմ քեզ բնություն»	15.05 -19.05
XXXII	Էքսկուրսիա	22.05 -20.05